Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 24-ի N 636- Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՁՆԱԳՐԻ ՀԱՄԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի (այսուհետ՝ անձնագիր) համարը սերիայի և թվային յոթ նիշերի համակցություն է:

2. Անձնագրերը պատրաստվում են սերիաներով, յուրաքանչյուրը՝ 500.000 օրինակ տպաքանակով: Սերիաները նշագրվում են լատինական գլխատառերով (BA, BB, BC և այլն): «B» տառը դրվում է բոլոր սերիաների սկզբում:

3. Թվային յոթ նիշերից վերջինը ճշգրտող նիշն է: Ճշգրտող նիշը ձևավորվում է ISO/IEC 7501-1:1997 ստանդարտի հիման վրա:

4. Անձնագրերի համարներն սկսվում են 000001 (ճշգրտող նիշ) և ավարտվում 500000 (ճշգրտող նիշ) թվանշաններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ